Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

01.02. 2023թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» (քաղաքական գիտություններ) մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Սիլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2023թ. հունվարի 31-ի նիստում (արձանագրություն N1): Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, հ.գ.թ, դոցենտ Լ. Պետրոսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու, ԱՄՆ Պրիստոնի համալսարանի շրջանավարտ Ռ. Էլամիրյանը, քաղ. գիտ. թեկնածու, Մ. Արսենյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, պատ. գիտ. թեկնածու Ա. Տեր-Գրիգորյանը, քաղ. գիտ. թեկնածու Բեդրոս Չավիկողլին, քաղ. գիտ. թեկնածու Մ. Մարգարյանը, ասիստենտ Լ. Նիկողոսյանը: Մասնակցում էին նաև ասպիրանտներ Ա. Հարությունյանը, Հ. Փայտյանը, Ս. Ղահրամանյանը, Ֆ. Նիկողոսյանը, Գ. Պողոսյանը :

Սիլվա Ռուբենի Խաչիկյանի «Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)» ատենախոսության թեման խիստ արդիական է, քանի որ հնարավորություն է տալիս համալիր կերպով ուսումնասիրել Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման ներքին և արտաքին

քաղաքական գործոնները՝ հաշվի առնելով միջազգային անվտանգության ապահովման ներկա կոնյուկտուրան: Գնահատելի է, որ «խաղաղ ատոմի» զարգացման հայկական փորձի ուսումնասիրության նպատակով դիտարկվել և հետազոտության է ենթարկվել ատոմային էներգետիկայի զարգացման միջազգային փորձը և վերջինիս աշխարհաքաղաքական համատեքստը: Ատենախոսությանը կարևոր նշանակություն է հաղորդում ատոմային էներգետիկայի դերի գնահատման փորձը էներգետիկ համակարգերի կայուն զարգացման տեսլականի շրջանակներում, ինչը խիստ արդիական է միջազգային ասպարեզում առավել ազդեցություն ստացող «կանաչ» օրակարգի համատեքստում: Վեր են հանվել ազգային էներգետիկ քաղաքականության մեջ ատոմային էներգետիկայի դերը և՛ կայուն զարգացման, և՛ էներգետիկ անվտանգության ապահովման, և՛ Հարավային Կովկասի տարածաշրջանում առաջացող նոր մարտահրավերների համատեքստում: Այս առումով, հատկապես նշանակալի է Հարավային Կովկասում ատոմային էներգետիկայի զարգացման միտումների դիտարկումը: Միևնույն ժամանակ Հայաստանի էներգետիկ համակարգում տեղի ունեցող փոփոխությունները և 2020 թ. 44-օրյա պատերազմին հաջորդող նոր քաղաքական իրողությունները թելադրում են «խաղաղ ատոմի» դերի վերաիմաստավորման և ատոմային էներգետիկայի երկարաժամկետ զարգացմանն ուղղված ռազմավարական դրույթների մշակման անհրաժեշտությունը՝ Հայաստանի էներգետիկ և ազգային անվտանգության տեսանկյունից: Ավելին, միջազգային անվտանգության ապահովման գործընթացների համատեքստում կարևորվում է հայկական «խաղաղ ատոմի» դերը միջուկային անվտանգության ու Հարավային Կովկասում էներգետիկ համակարգերի բալանսավորված զարգացումն ապահովելու տեսանկյունից: Ատոմային էներգետիկայի զարգացման հայկական փորձի ուսումնասիրության նպատակով կիրառվող նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքագիտական տեսանկյունից վերլուծել ոլորտին առընչվող գործընթացները էներգետիկ անվտանգության ապահովման համատեքստում: Ատենախոսությունում արժեքավոր է նաև հայկական «խաղաղ ատոմի» զարգացման հնարավորությունների և հեռանկարների ուսումնասիրությունը՝ Հայաստանի՝ ԵՄ և ԵԱՏՄ ինտեգրացման գործընթացների շրջանակներում: Ընդ որում՝ այս ինտեգրացիոն կառույցների կողմից էներգետիկ և, մասնավորապես, ատոմային էներգետիկայի զարգացմանն ուղղված քաղաքականության հետազոտությունը թույլ է տալիս դիտարկել ոլորտի զարգացման միտումները և հեռանկարները ոչ միայն Հայաստանի, այլ նաև այլ անդամ-երկրների համար:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի էներգետիկ անվտանգության համակարգում «խաղաղ ատոմի» ռազմավարական նշանակությամբ և միջազգային անվտանգության ապահովման գործընթացների հետ ատոմային էներգետիկայի ոլորտի փոխկապվածությամբ:

Ատենախոսության նպատակն է՝ համապարփակ կերպով վերլուծել Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման քաղաքական ասպեկտները՝ միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում:

Այս համատեքստում հեղինակին հաջողվել է վերլուծել «խաղաղ ատոմի» զարգացումը և միջուկային զենքի չտարածումը երաշխավորող միջազգային ռեժիմի դերը միջազգային անվտանգության ապահովման գործում, գնահատել ատոմային էներգետիկայի պոտենցիալը էներգետիկ համակարգերի կայուն զարգացման գործում, ուսումնասիրել միջուկային քաղաքականության հիմնական մոդելները և օգտագործված միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման միջազգային փորձը: Ատոմային էներգետիկայի զարգացման միջազգային փորձի դիտարկումը թույլ է տվել վեր հանել Հայաստանում միջուկային քաղաքականության առանձահատկությունները՝ հայկական «խաղաղ ատոմի» զարգացման փորձի վերլուծության նպատակով: Ինչպես նաև հեղինակը կարողացել է գնահատել Հայաստանում ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարները տարածաշրջանում ատոմային էներգետիկայի ոլորտի զարգացման հիմնական միտումների և աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

Հաշվի առնելով վերոնշյալ հետազոտական խնդիրների լուծումը ատենախոսի կողմից՝ սույն թեկնածուական ատենախոսությունը կարելի է որակել որպես արդիական և ավարտուն գիտահետազոտական աշխատանք, որում հեղինակը քաղաքագիտական տեսանկյունից համապարփակ կերպով ուսումնասիրել է Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում:

Գնահատելի է այն, որ թեմայի բազմաշերտ բնույթը թույլ է տվել հեղինակին կիրառել է ընդհանուր գիտական և զուտ քաղաքագիտական վերլուծության մեթոդներ: Քաղաքաիրավական վերլուծության մեթոդի կիրառումը, իր հերթին, օգնել է դիտարկել միջուկային անվտանգության միջազգային համակարգը կազմող հիմնական ինստիտուցիոնալ և իրավական հիմքերը, ինչպես նաև քննել Հայաստանի միջուկային քաղաքականության հիմնական դրույթները: Ատենախոսության մեջ կիրառվել է նաև համակարգային մեթոդը, ինչի օգնությամբ համալիր կերպով դիտարկվել են հայկական «խաղաղ ատոմի» զարգացման վրա ազդեցություն ունեցող քաղաքական գործոնները: Գնահատելի է, որ հեղինակի կողմից «էներգետիկ տրիլեմայի» հայեցակարգի կիրառմամբ գնահատվել է ատոմային էներգետիկայի դերը ինչպես գլոբալ, այնպես էլ Հայաստանի էներգետիկ համակարգի կայուն զարգացման համար, ինչը զգալի դեր ունի էներգետիկ քաղաքականության ձևավորման գործում: Պատմական մեթոդի կիրառումը թույլ է տվել հեղինակին դիտարկել հայկական «խաղաղ ատոմի» զարգացման նախադրյալները և դրա նշանակությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համար: Համեմատական սկզբունքի շնորհիվ հնարավոր է դարձել բացահայտել Հայաստանում ատոմային էներգետիկայի

զարգացման առանձնահատկությունները: Այս և տարբեր այլ մեթոդների համադրումը թույլ է տվել լուծել հետազոտական խնդիրները և վեր հանել թեմայի բազմաշերտությունը:

Հարկ է նշել, որ ատենախոսության առանցքային դրույթները կիրառելի են և ունեն գիտագործնական նշանակություն և՛ գիտական հետազոտությունների իրականացնելու, և՛ Հայաստանի էներգետիկ քաղաքականության մեջ միջուկային էներգետիկայի դերի վերաիմաստավորման համար: Ատենախոսության գործնական արժեքը նաև կայանում է նրանում, որ հեղինակը քննել է միջազգային ասպարեզում միջուկային էներգիայի կիրառման հետ կապված անվտանգային խնդիրներ և ներկայացրել ատոմային էներգետիկայի զարգացման առանձնահատկությունները տարբեր երկրներում:

Այսպիսով, ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի էներգետիկ և ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման և կատարելագործման ընթացքում, ինչպես նաև նպաստել սույն ոլորտներով զբաղվող կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսությունը համակարգված և ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է գիտական պատշաճ մակարդակով:

Աշխատանքը պարունակում է առաջադրված խնդիրների համապարփակ լուծում:

Ատենախոսն օգտագործել է անհրաժեշտ գիտական և աղբյուրագիտական հենք, «խաղաղ ատոմի» զարգացման հիմնախնդիրներին առնչվող մի շարք մենագրություններ և գիտական հոդվածներ, գիտավերլուծական նյութեր, միջուկային անտանգությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթեր, Հայաստանի միջուկային քաղաքականության հիմնական դրույթներն արտացոլող օրենսդրական ակտեր և ռազմավարական փաստաթղթեր:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (տաս ենթագլուխներից), եզրակացությունից, գրականության ցանկից:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար էներգետիկ և ազգային անվտանգության ռազմավարությունների կատարելագործման համար: Ուսումնասիրության արդյունքում կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ և հետևություններ, ինչպես նաև պրակտիկ առաջարկություններ ատոմային էներգետիկայի զարգացումը խթանելու համար Հայաստանի Հանրապետության ազգային շահերին համապատասխան: Հեղինակի եզրահանգումները և հետևություններն ունեն տեսական և կիրառական մեծ արժեք: Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրապարակած հոդվածները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսության նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսին հաջողվել է կատարել Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձի համալիր քաղաքագիտական վերլուծություն միջազգային անվտանգության ապահովման գործընթացների համատեքստում:

Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակի հրապարակային պաշտպանության դրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սիլվա Խաչիկյանի առենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող դիտողությունները.

1. Գնահատելի է, որ ատենախոսությունում հեղինակը ներկայացրել է ազգային էներգետիկ քաղաքականության մեջ ատոմային էներգետիկայի դերը, և՛ կայուն զարգացման, և՛ էներգետիկ անվտանգության ապահովման, և՛ Հարավային Կովկասի տարածաշրջանում առաջացող նոր մարտահրավերների համատեքստում: Կարծում ենք, աշխատանքը էականորեն կշահեր, եթե հեղինակը շեշտադրված ներկայացներ դեռ 1968 թվականին Հռոմեական ակումբի կողմից մշակված «կայուն զարգացման» հայեցակարգի արդի հիմնախնդիրները՝ հատկապես զարգացող երկրներում նրա ձևական բնույթը: Դա հնարավորություն կտար միաժամանակ բազմամակարդակ ներկայացնելու «ուժային բևեռների» կողմից նեոմալթուսականության խաղային էությունը:

2. Հեղինակը, քննելով միջազգային ասպարեզում միջուկային էներգիայի կիրառման հետ կապված անվտանգային խնդիրներ, ներկայացրել է ատոմային էներգետիկայի զարգացման առանձնահատկությունները տարբեր երկրներում: Համոզված ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեր նաև Կոպենհագենյան դպրոցի ամենաակտիվ ներկայացուցիչ Բարի Բուզանի «անվտանգության ընդարձակ օրակարգի» իրականացման մեթոդաբանական առանձնահատկությունները՝ ըստ պետության ինստիտուտի և պետականաշինության մշակույթի ինդեքսների: Նմանօրինակ մոտեցումը արդյունավետ է, քանի որ դրա օգնությամբ կկարևորվի «փորձի և սխալի» կառավարման հարացույցից հրաժարվելու և «գիտավերլուծական» հարացույցի հիմքի վրա անվտանգության ընդարձակ օրակարգի հիմնական բաղադրիչի՝

քաղաքական անվտանգության ապահովման հիմնախնդրի կարևորումը: Համոզված ենք, որ առանց դրա զարգացող ոչ մի երկիր չի կարող ընդգրկվել ատոմային էներգետիկայի հետագա զարգացման տիրույթ:

3. Ուշագրավ է, որ հեղինակը պատմական մեթոդի կիրառման օգնությամբ հիմնավորել է հայկական «խաղաղ ատոմի» զարգացման նախադրյալները և դրա նշանակությունը ՀՀ-ի ազգային անվտանգության ապահովման համար: Անշուշտ գնահատելի մոտեցում է, բայց չպետք է մոռանալ, որ սովետական իշխանության տարիներին Հայաստանը համարվում էր բնագիտական, նաև էներգետիկ, կրթության հզոր կենտրոն: Այսօր դա չկա, հիմա հեղինակը ինչպես է տեսնում կադրային հարցի լուծումը՝ տեղական կադրեր պետք է պատրաստել, թե անդրազգային կորպորացիաների համար «փափուկ ուժի» դեր կատարող մասնագետներ բերել Հայաստան:

4. Նպատակահարմար էր Հարավային Կովկասը որպես գլոկալ տարածք համակարգված վերլուծելիս հատկապես կարևորել այն, որ «ուժային բևեռներից» յուրաքանչյուրը ունեն իրենց պոսմոդեռնիստական լեզվամտածողությունը և խաղերը: Այդ առումով հատկապես ուշագրավ է այն, որ պարբերաբար Էներգետիկ ճգնաժամ ապրող ԵՄ-ն սեփական ապաինդուստրիալացումը կանխելու նպատակով հատուկ ռազմավարական նշանակություն է տալիս Կովկաս-Կասպյան տարածաշրջանին: Ըստ Բաքվի ու ԵՄ միջև ձեռքբերված պայմանավորվածության՝ 2022 թ.-ին Ադրբեջանը եվրոպական շուկա է արտահանել 11 մլրդ խմ, իսկ 2023թ.-ին պլանավորում է հասցնել ծավալները 12,5 մլրդ խմ-ի, ինչը կազմում է ԵՄ սպառման ընդամենը 3-3,5%: Այնուհանդերձ Ադրբեջանը ԵՄ կողմից դիտարկվում է որպես որոշիչ էներգատրանսպորտային հանգույց Եվրոպա-Կովկաս-Ասիա լոգիստիկ ռազմավարության մեջ: Ատենախոսության հեղինակը ինչպես է լուծում հայկական «խաղաղ ատոմի» զարգացման խնդիրները, երբ ԵՄ –ի հետ ՀՀ-ի բանակցային խնդիրները, դա ակնհայտ դարձավ 44- օրյա պատերազմից հետո, տեղի է ունենում **Մոբյուսի ժապավենի մոդելի** արժեքաբանության հիմքի վրա:

5. Աշխատանքը կշահեր, եթե հանգամանալից բացահայտվեր, որ Կովկաս-Կասպյան տարածաշրջանը մեծ նշանակություն է ձեռք բերում հատկապես Անդրկասպյան գազամուղի կառուցման տեսանկյունից: Այս առումով կարևոր է ՀՀ-

ով անցնող միջանցքը, քանի որ այն նաև ծառայցվելու է Կենտրոնական Ասիայում թուրքական ազդեցության մեծացմանը: Այստեղից բխում է հետևյալ հարցադրումը. այսօր, երբ 2020 թ.-ի պատերազմից հետո Անկարան ու Բաքուն պարբերաբար խոսում են, որ պատրաստ են «Զանգեզուրյան միջանցքով» նաև գազամուղ և բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ անցկացնել, ապա Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում որքանով է ռեալ և ինչպես:

6. Թուրքիայում այսօր ձևավորում է միջազգային գազատրանսպորտային խաբ, ինչը Անկարայի կողմից որդեգրված՝ միջազգային լոգիստիկ ուղիների զարգացման ռազմավարության արդյունք է: Այդ խաբից օգտվելու հնարավորություն է ստանում նաև Իրանը, որը, որպես կոնվենցիոնալ գազի մատակարար հետաքրքիր է եվրոպացիներին: Թուրքական խաբից օգտվելու է նաև ՌԴ-ն, որը փորձում է Անկարայից երաշխիքներ ստանալ առ այն, որ խաբը չի սահմանափակելու ռուսական գազի ընդունումը: Ստացվում է՝ Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում խոցելի է, քանի որ «ուժային բևեռները» անվտանգության ապահովման նկատմամբ կիրառական և օգտապաշտական մոտեցումներ ունեն:

7. Աշխատանքում առկա են տեխնիկական թերություններ. այն ունի խմբագրման կարիք:

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ **Սիլվա Ռուբենի Խաչիկյանի՝ Հայաստանում «խաղաղ ատոմի» զարգացման փորձը միջազգային անվտանգության ապահովման գործընթացի համատեքստում (քաղաքագիտական վերլուծություն)»** թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է **ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի *2023 թ. հունվարի 31-ի նիստում:*

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հ.գ.թ, դոցենտ_____ Լ. Պետրոսյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____ Ս. Պողոսյան

01. 02. 2023 թ.